

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՐՔԱՑՈՒՄՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Թուրքիայի Նախագահ Աբդուլլահ Գյուլը 2009 թ. օգոստոսին Բիթլիս կատարած այցի ժամանակ հայտարարեց, որ Ներկայիս Գյուլոյմաք գավառի իսկական անունը քրդերեն Նորշին է: Մինչդեռ Նորշինը մաքուր հայկական է թե՛ իր բաղադրիչներով՝ Նոր+շեն (կառույց, գյուղ, բնակատեղի), թե՛ տեղանվանակազմ կաղապարածեով:

Տեղանունները լեզվական համեմատաբար կայուն փաստ լինելուց բացի՝ ունեն պատմագիտական եւ քաղաքական արժեք: Ուստի՝ Գյուլի հատարարությանը վերաբերող թուրքական լրատվամիջոցների հրապարակումները մեկ անգամ եւս հաստատում են, որ Օսմանյան կայսրության, հետագայում նաեւ՝ հանրապետական Թուրքիայի ղեկավար շրջանակները, շատ լավ հասկանալով տեղանունների ռազմավարական նշանակությունը, հետեւողական քաղաքականություն են վարել՝ Թուրքիայի սահմաններում գտնվող բնակավայրերի անուններն աղավաղելու եւ դրանք գանազան միջոցներով սեփականացնելու ուղղությամբ:

Թուրքիայում հայկական տեղանունների ձեւախեղման ավանդույթը դարերի պատմություն ունի: Օսմանյան իշխանությունները, նորանվաճ տարածքները յուրացնելու նպատակով, բնիկ տեղանունը թարգմանում էին թուրքերենի, ինչպես Տանձուտը՝ Արմուղլու, Աղբյուրաշենը՝ Քյանքենդի, Կարմրիկը՝ Քըզըլջա եւ այլն, կամ էլ տեղական բարբառի ազդեցությամբ նախկին ձեւից որոշ չափով հեռացած տեղանունը նմանեցնում թուրքական այս կամ այն բառին, այսպես՝ Արմտիքը դարձնում Արմուդի, Օծունխաչը՝ Ուզունհաչ, Օծունը՝ Ուզունլար, Քարվաճառը՝ Քելբաշար եւ այլն: Տարածված մեթոդներից էր նաեւ հին բնակավայրերին նոր անուններ տալը՝ ձգտելով մոռացության մատնել նրանց բնիկ պատկանելությունը:

19-րդ դարի կեսերից օսմանյան իշխանությունները որոշում են ոչ միայն անվանափոխել կամ աղավաղել հայկական նահանգների, գավառների, գյուղերի անունները, այլեւ իսպառ ոչնչացնել Հայաստան անունը: Այս քաղաքականությունը գործադրվեց հատկապես 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ Հայկական հարցն արեւմտյան տերություններն օգտագործեցին՝ Թուրքիայի դեմ: Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի կառավարությունը Հայաստան անունը փոխարինեց հնարովի Զրդստան կամ Անատոլիա տերմիններով: 1880 թ. սկսած պաշտոնական

փաստաթղթերում արգելվեց Հայաստան անվան հիշատակումը: Սրանով Բարձր դուռը ձգտում էր արեւմտյան տերություններին հասկացնել, որ Հայկական հարց գոյություն չունի. չկա Հայաստանը, չկա եւ Հայկական հարցը: Աբդուլ Համիդի օրոք մեծ վեզիր Զյամիլ փաշան այս կապակցությամբ հետեւյալ դրույթներն է զարգացրել. «Եթե Եվրոպայում մենք մեր սրտում օձ ենք տաքացրել (նկատի ունի բալկանյան ժողովուրդներին-Լ. Ս.), նույն հիմարությունը մենք չպետք է կրկնենք ասիական Թուրքիայում: Բանականությունը թելադրում է ճանապարհից վերացնել այն բոլոր տարրերը, որոնք մի օր մեզ համար կներկայացնեն այն նույն վտանգը, ինչը միջազգային միջամտության առիթ կտա եւ գենք կդառնա այդ տերությունների ձեռքին: Հիմա՝ համեմայն դեպս այսօր, մեր եւ Անգլիայի շահերը պահանջում են, որ Փոքր Ասիայում մեր տարածքներն ազատվեն այն աղբյուրներից, որոնք կարող են ուրիշների միջամտությանն առիթ տալ: Մենք եւ Անգլիան չենք ճանաչում «Հայաստան» բառը, եւ հարկավոր է ջարդուփշուր անել այն ծնոտը, որը կհամարձակվի նույնիսկ արտասանել այս բառը: Հետեւաբար, այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է այս հայ ազգն անհետ մաքրել երկրի երեսից, անողոքաբար ոչնչացնել»: Սուլթան Աբդուլ Համիդը, որը հայտնի էր նաեւ «Քրդերի հայր» (BavU Kurda) անունով, թուրք կամ քուրդ գաղթականներով վերաբնակեցված վայրերի հին անունները փոխարինում է նորերով: Դրանց տրվում էին կամ փաղիշահների, կամ էլ գաղթական ցեղերի անուններ՝ Համիդիյե, Ռեշիդիյե, Ազիզիյե: Այս քաղաքականությունը հատկապես ակնառու դարձավ իթթիհադականների իշխանության օրոք: Նրանք նախաօսմանյան շրջանին պատկանող տեղանունները փոխարինեցին իրենց անուններով:

Կայսրությունում տեղանունների համակարգված թուրքացմանն էր նպատակաուղղված 1913թ. մայիսի 13-ին ընդունված «Գաղթականների բնակեցման կանոնադրություն» փաստաթուղթը: Հաջորդ քայլը 1916թ. հունվարի 5-ին կատարեց երիտթուրքերի կառավարության ռազմական նախարար Էնվեր փաշան: Թուրքական ռազմաքաղաքական իշխանություններին առաքված Էնվեր փաշայի հրամանագիրը պահանջում էր Օսմանյան կայսրության հայերեն, հունարեն եւ բուլղարերեն տեղանունները փոխել թուրքերենի: Թարգմանաբար ներկայացնում ենք Էնվեր փաշայի ստորագրած հրամանագիրը՝

Հրամանագիր (Emirname)

1. Օսմանյան երկրում հայկական, հունական, բուլղարական եւ այլ ոչ մահմեդական ժողովուրդներին պատկանող նահանգի,

գավառի, գյուղաքաղաքի, գյուղի, սարի, գետի... Եւ այլ բոլոր անունների վերածումը թուրքերենի անհրաժեշտ է: Արագորեն օգտվելով հարմար պահից՝ այս նպատակի իրականացման համար ձեր աջակցությունն ենք հայցում:

2. Ձեր իրավասության տակ գտնվող տարածքում զինվորական հրամանատարության եւ վարչական պաշտոնեության հետ միանալով՝ թող կազմվեն անվանափոխության համապատասխան ցուցակներ, եւ նահանգի, գավառի, գյուղաքաղաքի կենտրոններն ընդգրկող այս ցուցակները հնարավորինս շտապ մաս առ մաս ներկայացվեն Գլխավոր շտաբ:...

3. Անհրաժեշտ է, որ նոր անվանումներն արտահայտեն աշխատասիրությամբ մշտապես ընդօրինակելի եւ չափանիշ հանդիսացող ու գովեստներով փառաբանված մեր զինվորականության պատմությունը: Պետք է հիշել ինչպես ներկա, այնպես էլ անցյալ պատերազմական իրավիճակներում ... հատուկ փառաբանված դրվագները: Կամ էլ պետք է գտնվեն այնպիսի անուններ, որոնք բնորոշ են տվյալ տեղանքի բերքին, արտադրանքին, առելտրին կամ աշխարհագրությանը:.... Բացի այդ՝ եթե օտար լեզվով վաղուց ի վեր ընդունված անունների հանկարծակի փոփոխություն լինի անհարմար անուններով, առաջ կբերի որոշ սխալներ, եւ պատճառ կդառնա, որ բնակչության շրջանում հին անունների օգտագործումը շարունակվի:

Չետեւաբար՝ նոր անունները պետք է ընտրել՝ այս ամենը նկատի ունենալով: Իսկ եթե չհաջողվի նման սկզբունքների հիման վրա անուն գտնելը, այդ դեպքում, օրինակ՝ Էրեղլին անվանել Էրիքլի կամ էլ Էրաքլը, Գալիբոլուն՝ Վելիբոլու...»:

Գլխավոր հրամանատարի տեղակալ՝ Էնվեր (1916թ.)

Էնվերի հրամանագրով ոգեւորվելով՝ թուրք հայտնի զինվորական Յուսեյին Ավնի (Ալփարսլան) բեյը գրում է. «Եթե մենք ուզում ենք մեր երկրի տերը դառնալ, ապա ամենափոքր գյուղի անունն անգամ պետք է թուրքերեն դարձնենք, այլ ոչ թե թողնենք հայերեն, հունարեն, արաբերեն: Այսպիսով՝ մեր երկիրը կներկենք մեր գույներով»: Ինչպես տեսնում ենք, նա իր նախարարից էլ մեկ քայլ առաջ է անցնում եւ անհրաժեշտ համարում նաեւ արաբերեն տեղանունների անվանափոխությունը, թեեւ Էնվեր փաշայի հրամանագրում խոսքը վերաբերում էր միայն «հայկական, հունական, բուլղարական եւ այլ ոչ մահմեդական ժողովուրդներին»: Նշենք, որ Արեւմտյան Հայաստանի տարածքում քրդերով վերաբնակեցված վայրերի անունները ճնշող մեծամասնությամբ եղել են հայկական: Մեծ եղեռնից հետո այդ տեղանունները հաճախ վերագրվել են քրդերին: Արեւմտյան

Հայաստանը, գրկվելով իր իսկական տերերից, պատմամշակութային բազմաթիվ արժեքների հետ շարունակում է ամեն օր կորցնել նաեւ հազարամյակների խորքից եկած հայկական տեղանունները: Դրանք հայտարարվում են քրդական կամ էլ՝ թուրքական:

Թուրքական «Փազարվաթան» կոչվող կայքէջում գետեղված «28 հազար տեղանուն փոխվեց: Ո՞ր տեղանունը ո՞ր լեզվին է պատկանում՝ չի իմացվում» հոդվածի (16.08.2009) հեղինակ Շ. Թյուրքերը քրդական տեղանունների շարքին է դասում Վանը, Անթեփը (Այնթապ), Խարփեթը (Խարբերդ), Էրզինգանը (Երզնկա), Չերմիգը (Ջերմուկ), Կաղըզմանը (Կաղզվան), Տեկորը, Վեստանը (Ոստան), Գերչանիսը (Կերչանիս), Փալին (Բալու), Ջուլեմերկը (Ջուլամերկ), Բեդլիսը (Բիթլիս) Գոզսին (Կոկսի), Կերսը (Կարս), Փուլուրը (Բլուր), Փերթակը (Բերդակ), Գեղին (Զըղի), Չերմեն (Ջերմե), Զոփը (Կոփ), Չեմիչգեգեքը (Չմշկածագ), Թերչանը (Դերչան), Զեմահը (Կամահ), Իսփիրը (Սպեր), Չարուշատը (Չարիշատ), Արթեմեթանը (Արտամեթ), Էրդիշը (Արճեշ), Չեղկանը (Չատկան), Էգինը (Ալկն), Թուփը, Զեբանը (Կապան), Ավշինը (Օշին), Սիվերեքը (Սեւ ավերակ), Ջիրմիքը (Ջերմիկ), Էրխվան-Արգուվանը (Արգավան), նույնիսկ՝ Էրզերումը (Էրզրում, Կարին), Զիլիսը (Եկեղեցի բառի աղավաղված ձեւն է) եւ այլն: Հոդվածագիրը համառորեն լռում է այս տեղանունների իսկական տերերի ճակատագրի մասին:

Երիտթուրքերից հետո տեղանունների «ազգայնացման» քաղաքականությունը շարունակեցին քեմալականները: Հանրապետության շրջանում այս գործընթացն էլ ավելի արագ թափ ստացավ: 1923-ից սկսած Արեւմտյան Հայաստանի տարածքը պաշտոնապես կոչվեց «Արեւելյան Անատոլիա»: Իսկ 1925 թ.՝ Շեյխ Սայիդի, 1927 թ.՝ Արարատի եւ 1938 թ.՝ Դերսիմի քրդական ապստամբություններից հետո թուրքական իշխանություններն սկսեցին անվանափոխել նաեւ քրդերով բնակեցված վայրերը: 1940 թ. Թուրքիայի կառավարությունն ընդունում է օտար լեզուներով ու արմատներով տեղանունները թուրքերենի փոխելու մասին թիվ 8589 շրջաբերականը: 1949 թ. Նահանգային վարչական օրենքում (I darsi Kanunu) մի առանձին հոդված էր նվիրված տեղանունների փոփոխությանը: 1957թ. ստեղծվում է «Անվանափոխման մասնագիտական կազմակերպությունը» («Ad Deitirme htisas Kurulu»), որն Էրզրումի նահանգում վերանվանել է 653, Ադանայում՝ 169, Էրզինջանում (Երզնկա)՝ 366, Ադյամանում՝ 224, Աֆիոնում՝ 88, Սուււում՝ 297, Վանում՝ 415, Ադրըում (Արարատ)՝ 374, Ամասիայում՝ 99, Գիրեսունում (Կերասուն)՝ 167, Անկարայում՝ 193, Գյումուշխանեում՝ 343, Օրդուում՝ 134, Անթալիայում՝ 168, Հաքքարիում՝ 128, Ռիզեում՝ 105,

Արդվինում՝ 101, Սպարտայում՝ 185, Սիիրթում (Սդերթ)՝ 392, Բիլեջիքում՝ 32, Ստամբուլում՝ 21, Սինապում՝ 59, Բինգյուլում (Բյուրակն)՝ 247, Իզմիրում (Չմյուննիա)՝ 68, Սիվասում (Սեբաստիա)՝ 406, Բիթլիսում՝ 236, Կարսում՝ 398, Թոքատում (Եվրոկիա)՝ 245, Կայսերիում (Կեսարիա)՝ 86, Տրապիզոնում՝ 390, Բուրսայում՝ 136, Դերսիմում՝ 273, Չանաքքալեում՝ 53, Զըրշեհիրում՝ 39, Շանլը Ուրֆայում (Ուռհա)՝ 389, Չորումում՝ 555, Մալաթիայում՝ 217, Էդիրնեում՝ 20, Մարդինում՝ 647, Դիարբեքիրում՝ 555, Մանիսայում՝ 83, Էլազըղում (Խարբերդ)՝ 383, Զահրաման Մարաշում՝ 105

բնակավայր։ «Անվանափոխման մասնագիտական կազմակերպությունը» 75 հազար տեղանուն ուսումնասիրելով, փոփոխել է 28 հազարը (որից 12 հազարը գյուղանուններ)։

3. Թունջելի հաշվարկներով 1940-2000 թթ. ընթացքում վերանվանվել է 12 հազար 211 գյուղանուն՝ մտավորապես գյուղերի 35%-ը։ Թուրք պատմաբան Այշե Յյուրը նշում է, որ «անջատողականությանը» վերջ տալու նպատակով փոխվեցին արաբական, պարսկական, հայկական, քրդական, վրացական, թաթարական, չերքեզական, լազական գյուղանունները»։ 1981-1983թթ. անվանափոխվեցին Թուրքիայի հատկապես արեւելյան, հարավային եւ Սեւ ծովի հարավարեւելյան շրջանների բնակավայրերը։ 2009թ. օգոստոսի 19-ին Ստամբուլի «Բիր գյուն» օրաթերթում հրատարակված «Թունջելին թող Դերսիմ կոչվի» հոդվածի հեղինակ Օ. Բիլիրը նշում է, որ թուրքական իշխանությունները հին տեղանվան որոշ հնչյունները փոխելով՝ նմանեցնում էին թուրքական այս կամ այն բառին, օրինակ՝ Չինչիվա՝ Շենյուվա եւ այլն։ Սա անվանափոխության մի մեթոդ է, որը, ինչպես նշել ենք, 1915թ. առաջարկել էր Էնվեր փաշան։

Յետաքրքրական է նաեւ այսպես կոչված քրդական տեղանունների թուրքացման մեջ աչքի է զարնող հետեւյալ երեւույթ. որոշ բնակավայրերի վերադարձվում են իրենց նախկին կարծեցյալ թուրքական անունները։ Իսկ դրանք իրականում հայկական են եւ եկել են դարերի խորքից։ Այսպես՝ Փերթազը (Բերդակ) վերանվանվել է իբր իր նախկին թուրքական տարբերակով՝ Փերթեկ, Ըսփըրը (Սպեր)՝ Իսփիր, Էրդեխանը՝ Արդահան, Շախը՝ Շատախ, Զերսը՝ Կարս, Չեդկանը՝ Էլեշքիրթ, այն Վաղարշակերտ>Ալաշկերտ-ի հնչյունափոխված ձեւն է, Գեդին՝ Զըղի, երկուսի մեջ էլ գյուղ>գեղ բառն է, Գիմգիմը՝ Վարդո եւ այլն։ Այս շղթայի մեկ օղակն էլ Նորշին տեղանվան հետ կապված Բիթլիսում Ա. Գյուլի հայտարարությունն է, որ միանշանակ չընդունվեց երկրի քաղաքական ուժերի կողմից։ Մասնավորապես՝ ընդդիմադիր Ազգայնական շարժում կուսակցության առաջնորդ Դելեթ

Բահչելին այս առիթով քննադատեց Գյուլին: Բահչելին հակադարձեց վարչապետ Էրդողանը՝ հիշեցնելով, որ օրինակ՝ Մանազկերտը հայկական տեղանուն է, իսկ Անկարան լատինական ծագում ունի: Կարծում ենք, որ Թուրքիայի վարչապետի այս խոստովանությունը պայմանավորված է նրանով, որ թուրքական իշխանությունները ձգտում են անհետք լինելու չհայտնվել եւ աշխարհին առավել ժողովրդավար եւ ազատամիտ երեւալ: Բացի այդ՝ թերեւս այդ հայտարարությունն ուղղված էր քրդերի տարածքային հավակնությունները նաեւ այս ձեւով զսպելուն:

Հանրապետական Թուրքիայում «ոչ մահմեդական» տեղանունների յուրացման համակարգված ծրագրին մեծապես օժանդակել է եւ «գիտական» հիմքերի վրա դրել թուրքական ժամանակակից պատմագիտությունը: Թուրք պատմաբանները, վաղ շրջանի օսմանյան արխիվային նյութերը, պատմագիրների երկերը հրատարակելիս, աղճատում կամ մերժում են հայկական տեղանունները, բիրտ խմբագրությամբ նաեւ Արմենիան կամ Էրմենիստանը փոխարինում հնարովի «Արեւելյան Անատոլիայով»՝ նպատակ ունենալով մոռացության մատնել Հայաստան երկրի գոյությունն առհասարակ: Այսպես, թուրք պատմաբան Յ. Սելենը, 17-րդ դարի հայտնի պատմագիր Զյաթիբ Չելեբիի «Ձիհան Նյուման» 1957 թ. հրատարակելիս, այդ պատմական երկի «Արմենիա երկրի մասին» գլխի վերնագիրն ուղղակի դարձրել է «Արեւելյան Անատոլիա»: Սակայն փաստն այն է, որ օսմանյան պատմագիր-տարեգիրների երկերում հստակորեն հիշատակվել է Հայաստանը իր սահմաններով հանդերձ: Ահավասիկ, Զյաթիբ Չելեբիի «Ձիհան Նյուման»-ի վերոհիշյալ գլխից մեկ հատված, որը լավագույնս բացահայտում է ժամանակակից թուրք պատմագիտության կեղծարարությունները. «Արմենի [Արմենիա] վիլայեթը բաղկացած է երկու մասից՝ Փոքր եւ Մեծ: Սահմաններն են Փոքր Արմենիան, Ռումը, Դիարբեքիրը, Զուրդիստանը, Ադրբեջանը եւ Արանը...»: Թեեւ Չելեբիի տված Արմենիա երկրի սահմանների ընդգրկումները թերի են, այդուհանդերձ, օսմանյան պատմագրի կողմից Հայաստան երկրի (Արմենիա) ընդունումը չափազանց արժեքավոր է: Արմենիա ընդարձակ երկրի մասին գրում է նաեւ Լույն դարի մեկ ուրիշ թուրք պատմիչ՝ Մյունեջջիմ Բաշին: Պատմիչների նկարագրություններից պարզորոշ երեւում է, որ XVII դարում օսմանյան պաշտոնական պատմագրությունը ճանաչում էր զավթված Հայաստանի գոյության փաստը՝ Մեծ Հայքի եւ Փոքր Հայքի սահմաններում եւ անվանում այն միջազգայնորեն ճանաչված անունով՝ Արմենիա: Այսպիսով, XVII դարում Հայաստանի նկատմամբ

Անատոլիա կամ Արեւելյան Անատոլիա տերմինները բնավ չեն օգտագործվել: Ավելին՝ XVI դարի «Իսլամական աշխարհացույց» քարտեզում եւ XVIII-XIX դարերի օսմանյան քարտեզներում նույնպես հստակ նշվում է Հայաստան երկիրը Երմենիստան ձեռով՝ իր սահմաններով հանդերձ: Ինչպես տեսնում ենք, թուրք պատմիչները լավ գիտեին Հայաստանի՝ Արմենիայի տեղը եւ ի հակադրություն այսօրվա թուրք պատմաբանների՝ այն չէին «շփոթում» Անատոլիայի հետ: Ի դեպ, Անատոլիա բառը հունարեն նշանակում է արեւածագ: Հնում, մոտավորապես մ.թ.ա. V-IV դդ. Անատոլիա է անվանվել Փոքր Ասիա թերակղզին: Օսմանյան կայսրությունում Անատոլիա կոչվում էր Փոքր Ասիայի հյուսիսարեւելյան հատվածն ընդգրկող վիլայեթը՝ Զյոթախյա կենտրոնով: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա անգամ օսմանյան եւ պարսկական տիրապետության տակ ընկնելուց հետո էլ բազմաթիվ աղբյուրներում հստակորեն հիշատակվում է որպես Արմենիա կամ Երմենիստան: Սա եւս մի կարեւոր վկայություն է, որ անգամ պետականության կորստից հետո էլ հայ ժողովուրդն իր հայրենիքում կազմում էր ճշգրիտ մեծամասնություն:

Ցավալին այն է, որ այսօր սփյուռքահայ որոշ պատմաբաններ, անգամ հայաստանյան վերլուծաբաններ ու դիվանագետներ, սկսել են Արեւմտյան Հայաստանը փոխարինել «Արեւելյան Անատոլիա» հնարովի տերմինով: Նրանք, փաստորեն հյուսիս-հնագանդորեն ի կատար են ածում 1880թ. Աբդուլ Համիդի որոշումը: Դեռ ավելին՝ որոշ սփյուռքահայ պատմաբաններ «Արեւելյան Անատոլիա» տերմինը տարածում են նաեւ Արեւելյան Հայաստանի վրա: Եթե նույնիսկ արեւմտյան գիտական շրջանակներում Թուրքիայի պետական քարոզչամեթոդների հետեւողական աշխատանքի եւ կեղծարարության արդյունքում, որոշ դեպքերում՝ նաեւ չիմացության հետեւանքով Արեւմտյան Հայաստանի փոխարեն ամրագրվել է հնարովի «Արեւելյան Անատոլիա» տերմինը, ապա մեզ համար այն անընդունելի է: Զանգի՝ Արեւմտյան Հայաստանի փոխարինումն «Արեւելյան Անատոլիա» տերմինով, նշանակում է՝ մեր իսկ կողմից պատմական Հայրենիքից հրաժարում, հայոց դարավոր պատմամշակութային ժառանգության մերժում, Հայոց ցեղասպանության ուրացում եւ հետեւանքների մոռացության մատնում, հայկական պետականության եւ Արեւմտյան Հայաստանի հանդեպ թուրքական մերժողական տեսակետների պաշտպանություն: Այսպիսով, Թուրքիայի իշխանությունները՝ հասկանալով, որ հայկական տեղանունները մի ողջ քաղաքակրթության արգասիք են եւ Արեւմտյան Հայաստանում հայոց գոյության խոսուն վկաներ,

չբավարարվելով այդ տարածքի իսկական տերերի ֆիզիկական ոչնչացմամբ, շարունակում են իրենց պատմամշակութային եղեռնը՝ վաղուց ի վեր թիրախ դարձնելով նաեւ հայկական տեղանունները: Մինչդեռ վաղնջական ժամանակներից հիշվող հայկական տեղանունները լեզվական ամրակուռ փաստեր են, որոնք ի չիք են դաձնում թուրքական այդօրինակ նկրտումները, բացահայտում ողջ ճշմարտությունը: Ուրեմն այսօր տեղանունների պաշտպանության, պահպանման եւ վերականգնման խնդիրը մեզ համար ունի ռազմավարական անգնահատելի նշանակություն:

***ԼՈՒՍԻՆԵ ՍԱՅԱԿՅԱՆ, Բանասիրական գիտ. թեկնածու,
Արտատպված է Արարատ ռազմավարա-գիտական կենտրոնի
կայքէջից՝ հապավումներով
(18 սեպտեմբերի, 2009, Ararat-center.org)***

Interview with

Baroness Caroline Cox

by **Arthur Ghukasian***



The Armenian people had a lot of enemies during their history. But at the same time they also had a lot of friends. You are one of those friends. How could you describe your feelings towards the Armenian people? What does Armenia mean to you and how could it happen that suddenly you felt a kind of responsibility willing to be useful to them somehow.

It has been my privilege to be with your Armenian people during the significant period when you were defending your historic land of Artsakh and to visit your people many times during that war and afterwards with humanitarian aid and to obtain firsthand evidence for advocacy. During those visits I was always humbled and inspired by the dignity, courage, hospitality and miracles of grace I encountered and it has been my privilege to be with many heroes and heroines. In my work, my primary commitment is to try to help people suffering from oppression and persecution - not only the Armenians of Karabakh, but also in countries such as Burma, Sudan, Northern Nigeria, North Uganda and Timor.

Your name has its unique place on the pages of our modern history. It is closely connected to Karabakh, which is an essential place in your biography. How can you explain the circumstance that getting known Artsakh ones,

your interest towards that country became more and more? How do you as Lady Cox, present Karabakh in your country and in other places. What are the impressions that you got from Karabakh so far?

In fulfilling my responsibilities for aid and advocacy for victims of oppressive regimes, I have now visited Artsakh 68 times. In recent years I have been profoundly impressed by the ways in which your people there are rebuilding a shattered land and shattered lives - illustrated by the visionary work of Vardan Tadevosyan and his professional achievement in developing the Rehabilitation Centre in Stepanakert with such dedication that it is now recognised internationally as a "centre of excellence". Whenever I visit Artsakh, I am always amazed by the resilience and resourcefulness of your people and the way in which they demonstrate how the spirit of Armenia is not only like a Phoenix rising from the ashes, but also creates beauty from the ashes of destruction.

An awful phenomenon that Rafael Lemkin called "genocide" is still repeated in different parts of the world nowadays. Isn't the reason of the continuation of that phenomenon in your own opinion that the whole world hasn't accepted the fact of Armenian Genocide yet? And what are in your opinion, the facts that forbid accepting the Armenian Genocide? I mean what are the obstacles to do it?

You will be aware that I have spoken many times on this subject and have maintained pressure for full recognition. In my humanitarian work with oppressed peoples, I have encountered, tragically, many other situations which might be considered 'attempted' genocide, such as the attacks by Burma's brutal military regime against ethnic national groups in Burma, or the war waged by Northern Sudan against the peoples of Southern Sudan and the marginalised areas (the Nuba Mountains, Southern Blue Nile and Abieye - or currently Darfur). In the first war two million perished and four million were displaced. The well reported objectives of that war were the Arabisation of African people and the Islamisation of those who were not already Muslims. I do not think that failure to recognise the Armenian genocide would have any direct relevance to that war. However, I do accept that the failure to recognise any genocide

may be an encouragement to others to believe that they can perpetrate genocide with impunity. I also believe that there are many obstacles which hinder the recognition of the Armenian genocide by governments and organisations who have, as yet, failed to do so, including the wish to avoid offending Turkey and possibly jeopardizing commercial and strategic interests.

You are from a noble family, you are baroness. What does that title oblige you? In what is the nobleman noble? Could you explain the process of becoming a lady?

I am not from a noble family: I was not born to a noble family but was appointed to the House of Lords, which is how I have become a Baroness. I believe that being a Member of one of the Houses of the British Parliament brings great privilege and, therefore, also great responsibility. I have tried to use that privilege by being "a voice for the voiceless".

What is the power to go forward? What source you take your power from?

I am a Christian and, as a Christian, I am obliged to remember the Biblical mandate requiring us to speak for the oppressed, to try to heal the sick, clothe the naked and feed the hungry.

If a woman were instead of me, she would definitely ask what a woman having chosen a political life should take into consideration in order to succeed.

As far as political life is concerned, I think there is no particular difference between men and women: both have an obligation to use the political arena as a Member in service.

Do you feel that you are unsatisfied after reaching your goals, or even disappointed?

In my work, with a commitment to trying to help people suffering from oppression and persecution, there is, unfortunately, no end in sight and there is, inevitably, frustration at not being able to do more for those in need.

It is said that the computer has changed people's way of life and habits? Has that machine changed anything in your life? If yes, what?

I have found the computer immensely valuable, time-saving in writing and in communication.

What would you like to add at the end?

I hope I will continue to use whatever opportunities and privileges I have to serve those who are suffering from

oppression and persecution, who are largely ignored by the international media - as you will find if you look at our website www.hart-uk.org. In so doing, I hope I will continue while it is necessary to try to promote justice and freedom for the people of Armenia and Artsakh, as well as recognition of the Armenian genocide and similar genocidal situations elsewhere in the world today.

**The interview has first appeared in Spanish language in 19/01/2011 in [Vega Media](#). The English version (originally written by Baroness Cox) is posted in Azad-Hye for the first time with special permission.*

Caroline Cox, Baroness Cox (born 6 July 1937) is a cross-bench member of the British House of Lords. She also is the founder and CEO of an organisation called the Humanitarian Aid Relief Trust (HART). She has campaigned for humanitarian causes, particularly relating to disability, and has championed a range of Christian, eurosceptic and marginal causes, including action on forgotten wars in Africa (from Wikipedia).